

“Droschak”  
 ORGANE  
 de la Fédération  
 Révolut. Arménienne.

# ԴՐՈՇԱԿ

Adresse :  
 G. F. Droschak  
 Rédaction du "Droschak"  
 13, rue de l'Éclairage  
 GENEVE (Suisse)  
 A. R. F. I. S. O. R. O.  
 LIBRARY

## “ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՃՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### Շ Է Կ Օ

Հ. Յ. Դաշնակցութեան «Արէժ» կենդրոնական կոմիտէն իր խորին ցան է յայտնում իր ընկերակից **ՅԷԿՕԻ** վրայ կատարած ոճի ընդմահու մասին։ Պաշտօնագրէս յայտարարում է, որ այդ գազանային սպանութիւնը համարում ոճի ընդմահու ընդմահու անձնական ատելութիւնից։ Ընկիւն յեղափոխական գործի դէմ ոչ մի յանցանք չէր գործած։

Ոճրագործները անյայտացել են։

Մեր դժբաղդ ընկերոջ յեղափոխական գործունէութեան մասին կը գրենք մօտիկ ապագայում։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ «ԱՐԷՅ»  
 ԿԵՆԿՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ.

### ՅՈՅՆ-ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Կատարեցի։ Զեւոնցը նետեցաւ, և հազարաւոր լեզուները տարրային հոսանքի նման մղեցին դէպի ահաւոր մենամարտութեան կրկեսը։ Կատարեց այն, ինչ որ սպասուում էր, այն, ինչ որ վաղուց ճակատագրական էր դարձել։ Զօգնեցին Յունաստանին տանձակ տարիների նրա խաղաղ ջանքերը, չօգնեցին նրան իր անվերջ յորդորներն ու սպառնալիքները։ Դիպլոմատիայի քար ու ապառաժ սիրտը անզգայ մնաց . . . Ի՞նչ էր մնում անել։ Մի վե՛հ նպատակ էր դրած նրա առաջ արիւնակից եղբայրների սարկական շղթաները վաղուց է, օգնութիւն էին գոչում, վաղուց է Մայր-Հայրենիքը փայփայում էր նրանց վերջնական ազատութեան գաղափարը։ Ազատել այդ սարուկ եղբայրներին, թէկուզ լինի դա ամենանոսր զոհողութիւնների գնով . . . Այո՛, արդէն լցւել էր բաժակը, Յունաստանը չտատանեց և առաջ սլացաւ։ Երկու ախոյեանները ելան դէմ-յանդիման, մէկն իբրև արդարութեան ջատագով միւսն իբրև խաւարի ու բռնակալութեան մարմնացում։ Կո-

ւր անհասար է։ Մի կողմում փոքրաթիւ զօրք, միւս կողմում՝ զօրքերի ճնշող առաւելութիւն։ Յակայն թըռնամու քանակական առաւելութիւնը սարսափելի չէր. առի՞ծ կտրեցին հէլլենները, հարւածին հարւած հասցրին, տարան մի շարք փայլուն յաղթութիւններ։ Բաղդը սկզբներում ժպտում էր Յունաստանին, որպէսզի, աւաղ, շուտով երես դարձներ նրանից. այսօր հեռագիրը յամառութեամբ միմիայն թիւրքական յաղթութիւնների մասին է գուժում։ Յունաստանի մայր հողը ոռոգւեց իր հարազատ զաւակների արիւնով։ Թշնամու զօրքերը մորեխի նման պատեցին երկրի մի մասը, գրաւեցին Քեսաղիայի դաշտավայրը և բանակ հաստատեցին Լարիսայում։

Պատերազմ է իր բոլոր արհաւիրքներով. հրդեհը բոցավառում է, սաստկանում, մարդիք կոտորում են ճանձերի պէս։ Մարդիկ կոտորում են . . . ցնծացէ՛ք բաշխօղակ դիպլոմատներ, ձեր փառաբանած համերաշխութեան արդիւնքն է սա։ Համաձայնութիւն պոռացիք սկզբից մինչև վերջ, արևելեան ամբողջ ողբերգութեան ընթացքում, իսկ այնտեղ շարունակ հոսեց արդարների անմեղ արիւնը։ Համաձայնութիւն պոռացիք, բայց երբէք չբռնեցիք անիրաւութեան ու բռնութեան ձեռքը, երբէք չխրատեցիք արիւնուշտ մարդասպանին։ Եւ համաձայնութիւն հռչակելով, դուք մղեցիք Յունաստանին պատերազմական փոթորիկների դաշտը ու այդ ահռելի ոճիրով պսակեցիք ձեր արիւնալից սխրագործութիւնների եղերական շարքը։ Պարծեցէ՛ք ուրեմն ձեր ժողովրդասպան համաձայնութեան պտուղներով, պարծեցէ՛ք, որ այսօր թնդանութիւնների մահաշունչ որոտը դղրեցնում է աշխարհը, որ հազարաւոր մարդ-արարածների կարմիր արիւնով շաղխուում են լեռներն ու ձորերը, պարծեցէ՛ք ձեր այդ գազանային յաղթանակներով։

«Յունաստանը յետ է նահանջում» — կայծակի արագութեամբ սլացաւ դէպի ամեն կողմ, խորին դաւնութիւն ու կսկիծ պատեց բոլոր ազնիւ սրտերին։ Իսկ սեւահամբաւ թիւրքաժողովների բանակում թնդաց դիւական քրքիջ . . . «Պապանձեցէ՛ք լեզուներ, թիւրքիան տակաւին կանգուն է, ուժեղ, կազմ ու պատրաստ»։

Այո՛, կարող էք հրճւել, դուք, սուլթանական բռնակալութեան ամեն կարգի երկրպագուներ։ Եւ ի՞նչպէս

ՀՏրճւիք. Եւրոպան իր խնամակալութեան տակ է առել Մեծ-Մարդասպանին, ձեր սիրեցեալ Սուլթան-Համիդին: Նա կազմակերպում է և իր կատարելագործած հրացաններով ու թնդանօթներով կուրի դաշտ է հանում Կազակական գնդերը: Միւս կողմից նա ջանք է թափում անանցանելի խոչընդոտներ՝ դնել փոքրիկ Յունաստանի առաջ, որը առանց այն էլ իր ջնջին ուժերով պարտութիւն է կրում: Տեսէ՛ք, Սալոնիկը, ուր Յունաստանը աւելի աջող պատերազմական գործողութիւններ կարող էր մղել, անմատչելի են դարձնում յունական նաւերին . . . Այո՛, քրքջացէ՛ք, սուլթանի խնկարկուններ, Եւրոպան այսօր բացարձակ դահճապետի դեր է ստանձնել մի փոքրիկ քրիստոնէայ ժողովրդի դիմաց, քրքջացէ՛ք, սակայն . . . դեռ ամեն բան վերջացած չէ:

Ի՞նչ կը լինի վաղը—չենք կարող գուշակել: Ա՛ր է տանում մեզ դէպքերի ճակատագրական հոսանքը: Արդեօք գոռօզ դիպլոմատիային պիտի՞ յաջողի իր ամենակարող «համերաշխութեան» շնորհիւ սահմանափակել պատերազմի թատրո: Չենք հաւատում. թող արաքւին գիւնազգեսները, թող կաշուց դուրս գան, այսուհետեւ այլևս ոչ մի պարզամիտին չեն կարող համոզել, որ նրանց ողբայի համերաշխութիւնը դրական արդիւնք կը տայ:

Երբէ՛ք: Երեկայ փաստերը պերճախօս վկաներ են: Այդ համերաշխութիւնը չկարողացաւ խանգարել պատերազմի ժայթքումը, նա չպիտի կարողանայ և արգելք լինել նրա տարածման:

Մեն-մենակ է այսօր Յունաստանը: Թշնամու անհամար գնդերի դէմ մեն-մենակ կուռում է նա յուսահատաբար և կոտորում է: Այո՛, բայց հերոսական, անվճար դիմադրութիւնից յետոյ, փառքով ու պատուով է կոտորում. . . Վեցցէ՛ք դուք, հայրենիքի քաջարի պաւակներ, դուք ապացուցիք, որ ձեր քաջ պատերի արժանաւոր սերունդն էք, դուք ցոյց տւեցիք, որ դիւցապնաբար կարող էք կուռել ու նահատակել: Եւ դուք կը պատերազմիք մինչև վերջին շունչը ու թող չէք տայ, որ ձեր դարաւոր ոտիքը իր պիղծ ներկայութեամբ անարգէ հէյլէնների պանծալի հողը: Եթէ յաղթւիք էլ, ձեր պարտութիւնը կը լինի յաղթութիւն. դուք կընկնէք պատերազմի դաշտում, իբրև մարմնացած զոհ դիպլոմատական նենգաւոր դաւերի, և կը խնկարկէ ձեզ մարդկութեան լաւագոյն մասը, սերնդէ-սերունդ, անէնք յիշով ժամանակակից բոլոր զօրաւորների սև յիշատակին . . .

Բայց մի՞թէ Յունաստանը մին-մինակ պիտի մնայ պատերազմի դաշտում: Մի՞թէ այս կրիտիքական ռուպէին Մակեդոնիան և այլ սուլթանահպատակ ըմբոստ ազգութիւնները ձեռք-ձեռքի չպիտի տան ընդհանուր ջանքերով տապալելու ասիական վայրենի բռնապետութիւնը, մի՞թէ նրանք կը շարունակեն լուս հանդիսատես մնալ Իսկ Բալկանեան պետութիւնները—Ահա նրանցից

մինը խօսեց բարձր ձայնով, սպառնալիքներ ուղղեց սուլթանին: Սակայն . . . յանկարծ լռեց. հիւսիսից շշնջաց նրան խորհրդաւոր ձայնը. դա սպիտակ Յայն էր, դա «Հայրիկն» էր, որ պատկրում էր Բօլզարիային հանգիստ նստել տեղը, մինչև որ իր հեղինակաւոր հրահանգները կը տայ: Սերբիան ևս սպառնական նշաններ է ցոյց տալիս. Ժողովուրդի մէջ յուզմունք է տիրում: Խուլ չարագուշակ ալեկոծութեան մէջ ծրփում է ամբողջ Բալկանեան թերակղզին. հրաբուխը ժայթքելու վրայ է . . .

Հապա Եւրոպա՞ն—ահա մեծագոյն հարցը: Անշուշտ կը շարունակեն «զօրութիւնից դուրկ զօրեղ պետութիւնները» բոս առաջնայն հուշակել, որ համերաշխութիւնը կատարեալ է, կը շարունակեն և իրենց խաբել և իրար խաբել, իսկ երբ արեւելքում կը ծաւալի հրդեհը և աւելի ահեղ ու սպառնալից կերպարանք կառնէ, երբ սուլթանական մեծածաւալ պետութիւնը կը յայտնուի կործանման անդունդի ծայրին, այն ժամանակ համերաշխութիւն ազդակող պառաւ Եւրոպան ինքզինքը կը նետէ արեան գոլորշիների մէջ. . . «Վեցցէ՛ք եւրոպական անհամերաշխութիւնը» զի ձայնով կը կանչէ դիպլոմատիան և կը յարձակի իր լէշ վրայ. կը փողփողին բազմերանգ դրօշակները սուլթանական դիակի շուրջ և . . . կը պայթի վերջապէս այն վիթխարի ընդհարումը, որին վաղուց ահ ու սառսուռով սպասում է քաղաքակիրթ աշխարհը, և որի առջև մանկական խաղ պիտի լինի ներկայ պատերազմը:

Ն Ա Մ Ա Կ Պ Ա Լ Ս Ի Յ

1/16 ապրիլ 97 թ.

Կոտորածի այն դժոխային նրապիրքը, որ արիւնարբու Համիդը իր արանեակներով գծած և կատարեալ յաջողութեամբ իրագործած էր, դեռ իր ամբողջ գործադրութիւնը գտած չէ: Խայտառակ և անխիղճ Եւրոպան իր հռչակաւոր համաձայութեամբ կարծես երգել է բոլորովին խեղդել մոնկոլ բռնապետութեան տակ ճնշած և հեծող ազգերու բողբոջ և պատութեան ձայնը, մէկ կողմէ իր հօր արակցութիւնը կը նւիրէ բռնաւորին՝ ազատութեան սիրով պորացած բուռ մը կրետացիներու դէմ, և միւս կողմէն իր վատ և թողաւոր քաղաքականութեամբ ասպարէզ տւած է անոր՝ բոլորովին ոչնչացնելու հայ ժողովուրդը, որ իր իրաւունքի և պատւոյ պաշտպանութեան ոճիրը գործելու յանդգնութիւնը ունեցած է: Նա շատ լաւ ըմբռնած էր՝ թէ ի՞նչ նշանակութիւն ունէին այն աւերելոյթ սպառնալիքները, որ համաձայն Եւրոպան որոտաց իր գլխին հայկական կոտորածներու առթիւ. նա համաձայն Եւրոպայէն աւելի լաւ գիտէ նաև այդ հա-

մաձայնութեան գաղտնիքը, որուն մինչև պարզելը՝ առիթ չի փակցներ բոլորովին տկարացնելու և անհետացնելու հայը, որ իր կայսրութեան հիմերը խախտեց և կործանման վտանգեց. իսկ մինչև այդ գաղտնիքի բացարձակ պարզելը այդ անհամերաշխ համաձայնութիւնը անհամաձայնութեան փոխելու խորամանկութիւնը և ինքնափստահութիւնը ունի, և ցարդ եղած փորձեր ապացոյց մ'են թէ նա յուսախար չի պիտի ըլլայ:

Հայ ծողովուրդը, բացի յեղափոխականներէ, կը հաւատար թէ Հանօթոյի և միւս պետութիւններու արտաքին գործերու ներկայացուցիչներու սպառնալից յայտարարութեանէն ետքը, որ ըրին օգոստոս 14-ի առթիւ տաճիկ կառավարութեան, այլևս վերջացած է կոտորածներու շրջանը. սակայն ապշեցաւ մնաց, երբ աչքին առջև տեսաւ Թօքատ և Վէմէրէկ արիւնաներկ դիակներով ծածկւած: Այո, վերջին հարւածն էր խախտելու այն տկար հաւատքը, որ ունէին դեռ կարգ մը անձինք Եւրոպայի և տաճիկ կառավարութեան արժանապատուութեան վրայ. այո, թուք և նախատիք է պատրիարքի և վարչութեան երեսին, որ տակաւին բեմի վրայէն և ընկերական շրջանակներու մէջ կայսերական բարեխնամ գթութիւնը կը դրւատեն. այո, թէև տխուր և ցաւալի, սակայն վրէժխնդրութեան բոցը ևս աւելի կարծարծէ հայ յեղափոխական կործանող տակ, որոնք միայն իրենց ուժերու վրայ ապաստան կը քարոզեն միշտ չխաբւել միամտաբար անամօթ և շահամոլ Եւրոպայի և լիբը Համիտի ստապատիր խոստումներէն այո, միանգամ ընդ միշտ կապացուցանէ: Թէ հաշտութիւնն անկարելի է հային ու տաճիկ կառավարութեան մէջ և թէ ամեն հայ, աղքատ թէ հարուստ, աշխարհական թէ կրօնաւոր, պարտաւորւած են կամայ թէ ակամայ ցմահ ռզորիլ ժողովրդի ազատութեան իրաւունքին պաշտպանութեան համար:

\* \*

Այս օրերս ամեն մարդ Թոքատի կոտորածով զբաղած է: Մանրամասնութիւններ կը ցուցնեն՝ թէ հոն ալ նոյն մէթոտը և նոյն անգթութիւնը գործադրւած է: Տաճիկ խուժանը զինւած կացիներով, տապարներով և սուրերով յարձակած է անպէն ժողովրդեան վրայ, որ նախապէս գիտակ շատերը պահւտելու զգուշութիւնը ձեռք առած էին: Հանդիպած հայը կը կոտորեն, քանսուկ-Մանուկ եկեղեցին կը մանեն, զարդերը կը կողպտեն, սեղանը կը պղծեն և քահանան՝ Յէր-Յովհաննէսը, կսպաննեն հոն գտնուողներուն՝ հետո կոտորածը կը տեւէ երկու ժամ, և այդ սուղ ժամանակին մէջ միայն քաղաքէն 130 հայ կսպանւին և 30 ալ կը վիրավորուին: Ապա կսկսի աւարառութիւնը, 265 տուն և լուսուրիւն Ապա կսկսի աւարառութիւնը, 265 տուն և լուսուրիւն կը կողպուին: Կուսակալը կը հասնի Սեբաստիայէն և խուզումներու վերջ կուտայ: Կոտորածը կը տարածուի և գիւղերը, ուր սպանւածներու թիւը

3-400-ի կը հասնի: Թոքատէն 4 ժամ հետո Պէչէրի գիւղի քով գտնուող Ս Յովհաննէս-Ոսկերեան վանքը կը կոխեն, կը թալանեն և Մանուկ ու Մարտիրոս վարդապետները 15 ուրիշ հայերու հետ կսպաննեն: Հոն կը հասնի վերջապէս Պոլսէն կազմած արդարադատ յանձնաժողովը, որ կսկսի ցոյց կազմակերպողները և պարագլուխները բռնել և բանտարկել. յայտարարութիւններ կը ցրէ, որպէսզի վնասուողները իրեն դիմեն, իրարու հետ սիրով վարւին, խանութները բանան, գիշերները դուրս չեննեն: Լայն և այլն: Տաճիկ խուժանը ապստամբական ցոյցեր կընէ, որպէսզի ձերբակալութիւններու շրջանակը չընդլայնի: Տաճիկ յանձնաժողովին գործակից են նաև Սամսոնի Ռուսական և Սեբաստիոյ Ագլիական հիւպատոսները: Հոն է նաև Սեբաստիոյ առաջնորդ Պետրոս եպիսկոպոսը:

Կոտորածի լուրը պատրիարքը իմացածին պէս անմիջապէս կառավարութեան կիմացնէ և կը խնդրէ, որ յանցաւորները պատժւին: Դեսպանները հաւաքապէս սուլթանին կը դիմեն, որ այս անգամ աղուէսային դէմքով, խոնարհ նայածքով իր ցաւը և դժգոհութիւնը կը յայտնէ եղածին վրայ և անմիջապէս երկու մարդ կընտրէ իրողութիւնը քննել տալու համար: Դեսպանները կը հակառակեն, սուլթանը կը համաձեռնակ անոնց պահանջին և ահա լիազօր յանձնաժողով մը կը կազմէի բարձրագոյն իրատէսով, գայմագամ, ուստիկանապետ և ուրիշներ պաշտօնանկ կըլլան, թերևս անոր համար, որ լաւ կազմակերպած չէին գործը և ամբողջ Թոքատի հայ ազգաբնակչութիւնը հրոյ և սրոյ ճարակ ընելու յաջողած չէին, հակառակ այնչափ փորձառութիւններուն: Այսչափ միայն. ալ ի՞նչ կուզէք. պիտի երթան, պիտի քննեն, պիտի պատժեն, և այս գոհացում մ'է պատրիարքին, որ սուլթան Համիտին խոնարհ երկրպագուն և կամաց-կամաց հլու գործիքը ըլլալու բաղձն ու երջանկութիւնը ունի:

Պատրիարքի յաջող քաղաքականութեան արդիւնքներէն մին է հաւաք 5 բանտարկեալներու արձակումը, որ ճարտարութեամբ յաջողեցաւ ձեռք բերել Թոքատի ահագին կոտորածի շնորհիւ: Ասոնք ընդհանուր ներումի մնացածներէն մի մասն են, երկու մարզանցիներ, Աշըգեանի տէրրօրիստը, անոր ընկերը և ուրիշ մը: Ուրիշներ դեռ կը մնան, սակայն անոնք ալ պիտի ազատուին անշուշտ, միայն ուրիշ կոտորածէ մը վերջը, թերևս Ռոստոմթոյի կոտորածէն: Կրօնհետև անցեալ օրեր բաւականի չափ սոփայներ, համանման և համաչափ, կոտորածի անհրաժեշտ գործիքներ, գտնւած են տեղացի տաճիկներու քով, և թէ շրջակայ գիւղերու գաղթական ու տեղացի թիւրքերու խլրատմներն ու շարժումներն հիւպատոսներու կողմէ կանխաւ իմացւած և առջևը առնւած է, ակամայ անպատճառ:

Հետապնդումներու և ձերբակալութիւններու շրջանակը երթալով կը սեղմուի կրեական խնդիրը տաճիկ-

ները կը յուզէ, զսպանած ատելութիւնը բացարձակ կը ժայթքէ անոնց աչքերէն:

Տնտեսական տագնապը ծայրայեղութեան կը դիմէ, առուտուր չկայ, ապահովութիւն չկայ, վերջը վերջը յեղափոխականը գիտէ . . .



### Ն Ա Մ Ա Կ Բ Ա Ք Ո Ւ Մ Ի Ց

23/7 փետրւար 97 թ.

Այս օրեր Տրապիզոնէն հասած ճանապարհորդներէ կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները:

Կրետական վերջին դէպքերը տեղւոյն թիւրք բնակչաց մէջ արդէն բաւական յուզում յառաջ բերած ըլլալով, այդ յուզումը աւելի կը սաստկանայ, երբ Պոլսէն կը հեռագրուի ըտեփ զօրքերը հաւաքելու հրամանը. մեծ ջանքով կսկսին ժողովել ըտեփները և քիչ ժամանակի մէջ կը յաջողին ղինուորներու մեծ մասը գէլքի տակ դնելը: Դրամ ունեցողներէն շատերը փոխանորդ կը վարձեն 30-40 ոսկիի փոխարինութեամբ. առհասարակ շատ մեծ դժգոհութիւն ցոյց կուտան և սաստիկ կը զայրանան յոյներու դէմ, որոնք պատճառ կը նկատեն իրենց կրած բոլոր վնասներուն: Խեղճ, տրգէտ ժողովուրդ, որ չգիտնալով չարիքին միակ աղբիւրը, իր զգացած բոլոր զայրոյթն ու ոխը կուզէ անմեղներու վրայ թափել:

Ամեն ժամանակ և ամեն բանի մէջ, ամենէն աւելի ճնշած ու հարստահարած գիւղացին այժմ նոր զբրկանքի մ'ալ կենթարկւի. անխիղճ կառավարութիւնը առանց ազգի խտրութեան իրենց ձեռքէն կանուխ իրենց ապրուստի միակ միջոցը եղող ձին և այն ալ ինչ մեծ անիրաւութեամբ, հազար ղուրուշ արժէք ունեցող ձիուն, չորս հարիւր ղուրուշ արժէք դնելով՝ տիրոջը կուտայ թղթի կտոր մը կառավարութենէն գանձելի, սակայն երբ, այդ միմիայն Ալաշը գիտէ և կամ մարգարէին փոխանորդ՝ դարուս ամենանշանաւոր դասապ' Լամիտը: Երբ գիւղացին սաստիկ յուզելով կառավարութեան ըրած այս անիրաւութեան գէմ, սկսի բողբոջել պնդելով՝ թէ իր ձին հազար ղուրուշ գնած է և չը կրնար 400 ղուրուշի տալ ո՞վ կը լսէ իր արդար բողբոջը, իրեն կը պատասխանեն. «երբ ձին պատերազմէն ողջ վերադառնայ, դարձեալ 400 ղուրուշով քեզ կը ծախենք և այսպէսով զրկանք մ'ալ չըլլար»: Ի՞նչ հիանալի արամբանութիւն և սուլթանական արդարութիւն:

Տրապիզոնի մօտ Բլաթանացի հայ գիւղացիներուն ձեռքն ալ նէր կը պահանջէ կառավարութիւնը. ի՞նչ սոսկալի անամօթութիւն, սպաննել կողպտել և ձիերն ալ նէր պահանջել:

Թիւրք աղքատ ընտանիքի մը երկու որդիները զինուորութեան կոչելով, մնացեալներուն ապրուստին համար իրենց ձին կը յանձնեն բարեկամի մը, որպէսզի գործածելով՝ ստացած շահէն շաքաթէ-շաքաթ մաս մը տայ անոնց, որով միայն անօթութենէ կազատէին. բայց անագորոյն կառավարութիւնը առանց այլևայլու-

թեան զայն ալ կը յափշտակէ:

Թող լսեն թիւրք յեղափոխականները և տեսնեն թէ իրենց թիւրք եղբայրները ի՞նչպէս կը տառապին անգութ գազանի մը ձիրաններուն մէջ, թէ և դեռ անոնց կրած բոլոր տառապանքները, մերիններուն քով ոչինչ են: Յունական մենաստանի մը շրիններն ալ ուզեցին, վանահայրը հաստ մը նւիրելով ազատեցաւ. առայժմ, բայց տեսնեք վերջը:

Այն գիշերը, երբ ըտեփները ժողովելու հրամանը կը հեռագրուի, նոյն առաւօտը փողոցները թափած կը գտնուին ահագին թուով թիւրք յեղափոխական թերթեր, «Միզան», և յայտարարութիւններ արիւնագոյն թանաքով գրած ու կնքած: Այս ամենը թէ՛ քաղաքը և թէ՛ գիւղերը այնքան ճարպիկութեամբ և այնքան մեծ քանակութեամբ կը ցրուին, որ բոլորին զարմանք կը պատճառէ: Մինչև իսկ մզկիթներու մէջէն կը գտնուին և կարծես թէ ըտեփները ժողովելու հրամանին կսպասէին: Թիւրք յեղափոխականները իրենց այս բոլոր թերթերով ու յայտարարութիւններով թէ և անմիջական արդիւնք չեն ունենար, այսինքն ժողովուրդը ուշքի գալով զինուորագրութիւնը մերժելու չափ քաղութիւն չունենար, սակայն բոլորովին ապարդիւն ալ չանցնիր, դժգոհութեան լուին բողբոջներու աճելուն կը նպաստեն և տակաւին այդ թերթերուն անուններն իսկ չլսողներ զանոնք աչքովին կը տեսնեն, կը կարգան և անշունչ իրաւունք կուտան գրածներուն: Գիւղերու մէջ այդ թերթերու երևալուն առթիւ հետաքրքիր և ծիծաղաշարժ բաներ կը պատմին. գիւղի մը մէջ 1-200 հոգւոյ չափ, քանի մ'անգամ կը հաւաքուին մզկիթին բակը, կը խորհին թէ ի՞նչ կը նշանակէ այս թերթերուն երևիլը և չկրնալով երբէք բացատրութիւն մը տալ ատոր, նախախնամութեան մատը կը նկատեն անոր մէջ և կրնեն թէ Մոսկովը իրենց երկիրը պիտի գրաւէ, անոր համար Ալաշը կանխաւ այդ թղթերը թափել տաւ, որպէսզի իրենց գիտցընէ գալիք պատուհասը. իսկ ուրիշներ կրնեն թէ այդ թղթերու մէջ տինամիթ կայ, որ անշուշտ մզկիթը օդը հանելու համար է և այս մտածումը այնքան կը սարսափեցնէ զիրենք, որ նոյն իսկ իրենց Բամազանի նւիրական օրերուն կստիպին մզկիթը գոցել, որպէսզի չլլայ թէ զիրենք ալ մզկիթին հետ օդը թոցեն: Ար պատմեն նաև թէ գիւղացիներէն շատերը զնուած կը շօշին գիւղին մէջ առանց գիտնալու թէ ինչու, և եթէ ազդեցիկ մեկը որ և է հրաման մը ընէր, պիտի գործադրէին առանց խորհելու թէ ինչ կրնեն, եթէ իրենց ըսէին՝ «Չարդեցէք քրիստոնեաները», պիտի ջարդէին, և կամ նոյնիսկ հրամայէին թէ՛ «քանդեցէք կառավարութիւնը»՝ դարձեալ պիտի ընէին. տգէտ ժողովուրդ, որ վտանգի ժամանակ ոչխարի նման մոլորելով, չկրնար երբէք կռուել իր ըրած գործին լաւ կամ վատ ըլլալը և միայն կուրօրէն կը հետևի իր առաջնորդներուն: Թէ քաղաքը և թէ գիւղը մօլլաներէն ոմանք կը հասկնան թիւրք յեղափոխականաց միտքը և մի քանին մինչև իսկ առանց վախնալու մզկիթին մէջ կը խօսին ընդդէմ կառավարութեան և զեղծում գործող պաշտօնեաներուն:

# ՆԱՄԱԿ ԾԱԳԻՆ-ԳԱՐԱՅԻՍԱՐԻՑ

Կ Ա Ր Ի Ն

2/14 ապրիլ 97 թ.

Շապին-Գարահիսարի վիճակը շատ երկիւղալի է. կառավարական ձեւակերպութիւնները կուզեն կլնցնել ժողովրդին՝ թէ ապահովութիւնը կատարեալ է. միւս կողմէ թիւրք խուժանի սպառնական ու զինեալ երեւոյթը մեզ ահուգողի մէջ կը պահէ: Քանի մ'օր առաջ բացեիրաց կը պոռային՝ «այս անգամ՝ յոյներն ալ մեկտեղ պիտի շարդեն»:

Փետրուար 24-ին քրիստոնէից վրայ յարձակելու մտադիր էին, բայց անյայտ պատճառներով ետ կեցան: Այս թիւրք ժողովուրդը մազի չափ մտածում, տրամաբանութիւն չունի, ոչ երկրին պահանջը գիտէ, ոչ օգուտը, կոյր անսիրտ գործիք մ'է, մոլեռանդ սրիկաներու և մօլաններու ձեռքը: Գ ա ա է ր կըսէ, ու առաջ կը վազէ . . .

Թորթի սարսափելի կոտորածի լուրին հետ հոս հասաւ նաև տեղւոյն միւթասերիֆին պաշտօնանկութիւնը, և չարագործներու դատապարտութեան երկիւղը . . . ատոր վրայ տեղիս կատողած խուժանը հանդարտեցաւ քիչ մը. կառավարութիւնն ալ իր կողմէն մուսիտիկներ հանեց, յայտարարելով՝ թէ ժողովուրդները իրարու չլնասեն, հակառակ պարագային խստիպիտի պատժին: Բայց հայ ժողովուրդին գրուելը այնքան քարին դպած է, որ կառավարութեան և անոր պաշտօնեաներուն փաղաքշիկ խօսքերուն վրայ հիւլէի չափ հաւատք չունի. մանաւանդ որ այստեղի կառավարիչը կարծես սուլթանի փորէն ելած է, իսկ մեր առաջնորդական տեղապահն ալ Ալըգեանի քանի մ'անգամ՝ եղաւ միւթասերիֆին թելադրութիւնով շնորհակալութեան ուղերձ կը մատուցանէ՝ թէ վախին և թէ միւթասերիֆին իրեն: Այս անգամ՝ միւթասերիֆին պաշտօնագիր (թագրիթ) մը ստացաւ, որուն մէջ վստահութիւն կար, թէ այլևս ո և է դէպք չի պատահիր, և եթէ տեսնեն տաճիկներ, որ գրգռումի տեղի կուտան իսկոյն իրեն իմացնեն ևայլ: Գործին աւելի զաւելտական կերպարան մը տալու համար, միւթասերիֆը իր թագրիթին հետ բարեհաճած էր զրկել նաև բարեմիտ առաջնորդին տալիք պատասխանն ալ, որուն մէջ կըսէր «տեղս երբէք դէտք չէ պատահած, հայ ժողովուրդը շնորհիւ տեղիս կառավարութեան, հանգիստ կերպով իր գործերը կը շարունակէ, ժողովրդին մէջ երբէք թշնամանք կամ ատելութիւն չկայ ևայլ ևայլն»: Իսկ մտքով ու մարմնով մեր ծերունագարգ Ամբրոսիոսը անխղճօրէն կատարեց չարասիրտ կառավարիչին հրամանը . . .

Օրմանեանի սուլթանը գովաբանող կոնդակը կարդացուցաւ, հաւատարմահրաւեր յորդորանքներով: Պաշտօնագրով մը առաջնորդին արտօնուեցաւ միշտ ներկայ գլուխուիլ խտրելի ժողովին: Այստեղական հայր ախն ամուսնութիւնը ներողամտօրէն պիտի նայի հայոց ապերախ տուլթեան վրայ, պիտի լեցնէ եղեր զայնք բարիքներով . . . մոռցնել տալ կուզէ իր գաղանութիւնները . . . Եթէ հայ ազգը գլխէն մինչև մանկի ծայրը, մինչև ոսկորներուն ծաւը լաւ ուսումնասիրած չըլար իր թշնամին . . .

Այստեղի համար տարածած լուրը շարդի մասին սուտ էր. սակայն ձերբակալուել են 1 հայ և մի քանի թիւրք զինուորականներ՝ իբր «Երիտասարդ Թիւրքիոյ» պատկանողներ: Ասոնց մէկը կրթական տեսուչն է, որը առնաւուտ մըն է:

Գրանից յետոյ Սլայ-բէյը յանկարծակի խուզարկեց բանտը, ուր գտան յեղափոխական նամակներ, թերթեր (հայ և թիւրք), բրօշուրներ և այլն. ձերբակալութիւնը վերսկսան: Բանտարկեալները կը գտնուին տանջարաններուն մէջ ու խիստ կը չարաբարին, որպէսզի «ճշմարտութիւնը» խոստովանին: Իսկ ամբողջ ոստիկանութիւնը աննդոտ գործունէութեան մէջ է. լքտեսներու թիւր բազմապատկած է. բոլոր «կասկածելի» անձնաւորութիւնը խիստ հսկողութեան տակ առնուած են:

## Թ Ի Ի Ր Գ Ի Ո Ց Ե Ո Ի Ր Զ Է

Օր մը էշը, կապիւղ, այծը եւ արջը կը մտածեն երաժշտական բանաստեղծ մը կազմել . . . Միշտ այդ ծրագրով կազմած է Եւրոպական համաձայնութիւնն ալ, որուն նպատակն է Եւրոպական վեցիսի պատականիին միջև անհամաձայնութիւնը միշտ վատ պահել:

Այդ վեց զարշնկները եթէ պուտ մը մարդկային զգացում չունեցան, երարու մէջ ալ պատուամասնութիւն չունին. գաղտնաձուկ կերպով կաշխատեն՝ թէ կնչալէս կրնան իրար գլորել:

Թէեւ այդ տէրութիւնները իրենց երկիւղներուն մէջ քաղաքակիրթ ու բարոյական ազգեր կը հռչակեն գերեմք, բայց երբ իրենց հորիզոնէն դուրս կեննեն, անբարոյականութեան սկզբունքով կը շարժին: Կրտսէն իսաղացնելու պատրաստով 80 զրահարող զրկեցին ու քաշաքար դէմ դրին . . . 600 ապստամբներու եւ վերջապէս թող չուին, որ այդ դարատանջ կողմերները իրենց ազատութիւնը ծնող ձգեն: Իսկ այսօր, երբ Յունաստանը Թիւրքիոյ մը անհաւատար կըսուի կը մոռնա իր իրաւունքները, այդ վեց լեշի ետեւէ վազող ազունները. հակառակ միշտազգային եւ պատերազմային իրաւունքներուն, Կրտսէն դեռ պաշարած եւ վաստ զնապակտը փակած են զրահարողներու վառարկի մը մէջ, որովհետեւ Կրտսէի առջև խնամած այդ չարաշուք համաձայնութիւնը, չարազուշակ նշաններ կամփոփել եւ մէջ:

Ինչ ալ ըլլայ կեղծ համաձայնութեան մը խաբուսիկ երեւոյթը, արեւելեան հարցին ամենէն հասուն ժամանակն է, կամ՝ պէտք է քաղել կամ՝ պէտք է ձգել որ որոշոտի:

Յունա-թրքական կոնֆլիկտ կսկսի արեւելեան քաղաքաշար հարասեղ ներկայացումը: Դրաւ է, տէրութիւնները ի ս ա ղ ու լ թ ի ս ա ն անունով կը զոռան, բայց կարելի է ըսել, «մի խողարութիւն, անունովը ինչե՞ր կը սարքին արդեօք մութին մէջ»:

Տաճկաստան. համակերպելով գ ա տ է ր ի ն, պիտի գտնէ վերջապէս իր ճակատազրակաւ ճակատագիրը: Յաղթութիւնը կամ՝ պարտութիւնը իրեն համար երկասյրի դաշտն մ'է:

Երբ Թեոսալոնի մէջ իրաց վիճակը վտղովի գոյն մը կառնէ եւ Պալքանի միջև պետութիւններն ալ կը տնջան Տաճկաստանի շոխ կողողալուտին, ամուսն Գերմանիոյ, Աւստրիոյ կայսրերը, տակերնին նափթ քսածի ալէ հեղինակ Պերլմանէն միջնամ, միջնամալու Բեթըսպուրի կը վազեն. անշուշտ որոշելու համար, թէ կ'նչալէս կարող են իսակեֆայի գոյութիւնը պահպանել, թիւրքիոյ ամբողջութեան շղարկել եւ . . . այդ խառնակեղ պզտիկ ազգերուն դաս մը տալ . . .

Սուլթանը ինք բուն քախտն սրթուն:

Եւ սուլթան . . . պիտի ոչնչանայ:

\*\*

Պետութիւններ կան, ինչպէս մարդիկ, որոնք հազարամեակ ծինուտ փորձանքներէ յետոյ, դեռ խելքերնին զլուինն չեն քերտր ու կարծես թէ անողոք ծակատագրակալութիւն մը որք բոլոր եւ ապաւաճածու ծավալներէ դէպի անուշտ կառաջնորդէ. զիրենք: Այսպէս են Սպանիա ու Թիւրքիա:

Այդ դժոխային երկիւնները երբ պատմութեան անողոք կտուրներուն տակ շարունակուող ըլլան, զագանութիւններու յիշատակ մը կը մնայն ձգեն իրենցմէ:

Կար ժամանակ, ո՞ր Օսմանեան կիսալուսինը աւելի կը լուսաւորէր չողագնուին վրայ, որքան չէր լուսաւորներ երկնից Լիալուսինը: Կար ժամանակ մը, երբ ալլահի սուլթանները կը փառասիրէին Հոսիֆի ս. Պետրոսի տաճարին խորանն վրայ իրենց ծիւղն խոտ կերցնելու Եւրոպան արուարդի մէջ կը պահէ: Որքա՛ն փոխուած են այդ հին քարի օրերը, ամեն քան շտապ զնաց, միայն Թիւրքը իր տեղը քարի պէս զամուս մնաց, ու իր անշարժութեան մէջ հոգով մարմնով ապականեցաւ ու իր մթնոլորտին մէջ ապրող ժողովուրդներուն համար պատիժ ու պատուհաս եղաւ:

Եկած է ժամանակը, ուր այդ Թշուառ ժողովուրդները գիտակեց իրենց կենսական ուժին եւ առաջնական մղումն կենդանի հակամարդկային վարքութեան մը դէմ, ալլահի սուլթան ալ չը սարսփեցներ զիրենք եւ իթէ ժամանակով սարսփահար ակնածանքով մը կը յիշէին սուլթաններու անուշտ սպար կը սիրեն շան անուշտ յիշել ու Համիտի անուշտ քերան չարնեց:

Ջնշեցէք Թիւրքիան եւ վերակազմեցէք նոր Թիւրքիա մը, վարչական ամեն կատարելագործումներով:--Առաջին օրէն պիտի սկսի կոտորի շարժումը: Այդ ժողովուրդը այն աստի առաջ կը քալէ, երբ հարկ է կործանել ու քարուքար ընել... կարծես Թրքաստանի շոր անապատներուն կարօտը կը քաշէ, ատոր համար երբ չի զբոնոր աւագ, մոխիրի վրայէ կը քալէ...

Անուշտայ կրկեր է Թիւրքիան. որպէսզի իր քարքարոս ու մոլեւանը բնագոյնը ուժամբաի ըլլան, պէտք է նախ հպատակեցնել քաղաքակերթ ազգի մը լուծին տակ, կատարելէ առաջ կառավարել սորվեցնել անոր. ապա թէ ոչ ծշմարտ մարդասիրութեան վերջին խօսքը պիտի ըլլայ սա արդարավճիռը «պէտք է կործանել Թիւրքիան»:

Բայց այդ ծշմարտ մարդասիրական դարը դեռ չատ հեռու է. փառամու կիբբեր ու անձնական կեղտոտ շահեր կը զոհեն ամեն ազնիւ եւ պարկեշտ սկզբունք: Եթէ դրամատէրներու շահուն եւ կամ կայսրերու քահանայքին համար վայրժնական դրութիւնը նախընտրելի է, կը տապալեն աներկայ ըստիւրակերթութիւնն ալ, եւ ընկերային առաջադիւրութեան առջիկ հրեամաններու պատմէջ մը կը քարճարցնեն...

Եթէ Սուլթան-Համիտ զոյուլիւն չունենար, պէտք էր հատ մը ստեղծել անկէ, դարավերջիկ մարդութեան ստոր նկարագիրը ի վեր հանելու համար: Բեծ-Մարդասպանը իր գազանութիւններով ծառայութիւն մ'ըրաւ. քաղաքակերթութեան կեղծ դիմակը վար առաւ, եւ մեզից ցոյց տուաւ այդ դիմակին տակ կոնծած ու արհեստի դէմը մը, որուն իւրաքանչիւր փոթիկները մթին անցեալի մը արտայայտութիւնը ունին:

Սուլթանը մինակ ոչինչ ըրաւ. իրեն զօրավիզ ունէր քրիստոնէս ազօր վեհապետներ: Տեսանք թէ ինչպէս իմաստասէր երկրի մը կայսրը, շիւզնելով քացարձակօրէն պաշտպանեց այն մարդը, որ առաջին անգամ ըլլալով ընդհանուր մարդութեան կողմէ Մեծ-Մարդասպանի տիտղոսին կարճամտայ: Երբ ընդունինք թէ հասարակութեան մէջ զոհիկ տիպեր կան, ինչո՞ւ չընդունինք թէ այդ զոհիկութիւնը ոսկեգօծ առաստաղներու տակ ալ կրնան առաջ գալ եւ աւելի նողկալի հանգամանքներով: Սա մեծարական է, որ Կլոսմը Համիտի տեղը չէ եղած, եթէ պահ մը հաւատանք հոգեփոխութեան, պիտի համարձակինք ըսել, թէ այդ մարդը Լէնկիմուրի հոգեփոխուածն է:

Թիւրքիան կը կործանի. արեւելեան հրաշէի հարցը պիտի հակեցնէ այդ երկրքը, որ արիւնի եւ անէճքներու զանգամ մ'է: Կիլոսմ միջինաօթէրական շահերը ուրիշ նպատակ չունին՝ այլ տարձակատանը իր հոգին չը փշած, անոր թանկագին առարկաները իւրացնել, իր կնկանը կործբքը, քիթը, քերանը զարդարելու համար: Ռուսիոյ

կայսրը ու Ֆրանսիական նախարարութիւնները բաւական կրծոք հանեցին, սուլթաններու դիգած մեծարարութամ աւարներն:

Մէկ քան մը մաց: Համիտը չմեռած Եւրոպական թագուհիները Պոլիս երթալու եւ իրենց երակտագիտական ստեղծող զգացումները անծամը յայտնելու են Մեծ-խալիֆային. իրենց էրկներուն... մէյնիկ պզտիկ խալիֆաներ հասցնելու համար.

Ինչպէս ամեն դար ունեցած է իր յատկանիշը, այս դարուն յատկանիշն եղած է վատութիւնը:

Այն տէրութիւնները, որոնք Պոլիսի դաշնագրով Թիւրքիոյ բերտունեաններուն պաշտպանութիւնը ստանձնած են, ոչ միայն չեն կատարեր իրենց խոստումը, այլեւ կը քաշալերեն թշնամին, Լըբութեան լրումն է ասիկա: Երբ Հայաստան արեան շրջեղել կար, Սաւրպարի սառ սրտով մը կը պէտք «Ի՞նչ ընենք, մեր նաւերը Տօրոսը չեն կրնար քարճարանալ»: Իսկ երբ Կրետէն կը կոտորէին, Սոլպարին Ի՞նչ կը մտածէր: անպատճառ կը ցանկար, որ իրենց նաւերը Իթայի վերջի քարճարանային... Բայց Ի՞նչ ըսես. լեզուն ոսկոր չունի, ուզած կողմը կը դառնայ, մանաւանդ երբ այդ լեզուն Սոլպարիի բերնին մէջ կը թաւալի: Անգլիական նաւերը. Կրետէն սմբակոծեցին, Հայաստանն ալ այդպէս պիտի ընէին անշուշտ, առէկ որ ներսերն ենք նոյր:

Եւրոպական դաշիճները իրենց կատակերգութիւնը լաւ խաղան: Թրքաթի անակնկալ կոտորածը վերջապէս եկաւ եւ. երեւան հանեց եւրոպական դիւանագիտութեան արհեստի դաւադրութիւնը: Զեկ գիտեր թէ այդ կայսր կուշած ճիւղները Ի՞նչ շան ծնունդ են, որ այդքան անխղճօրէն կը վարէին անտէր ժողովուրդներու զոյուլեան հետ: Թրքաթի մէջ 700 հոգի կոտորել տուաւ մոնկոլներու սուլթանը եւ Եւրոպան ծայր չի հանեց. բաւականացաւ քննութիւն մը քանալով: Սուլթանը իր արհեստին մէջ անցուցած, վաւին եւ մէկ քանի պաշտօնեաներ պաշտօնանկ ըրաւ, ցուցնելու համար թէ հակառակ է կոտորածի: Ասիկա կոտորածի նոր մէթոդն է, կոտորել տալ ու յետոյ ցաւ յայտնելով, քանի մը հոգի ձերբակալել է: անկէց դիւրին քա՛ն կայ: Դեռ անները սպառնացեր են, որ իթէ կրկին կոտորած, պատահի, վաւիններուն ըլլալը պիտի պահանջեն: Թէեւ սուլթանը այդ սպառնալիքները շան տեղ ալ չի դնէր:

Այս առաջին կամ տասներորդ անգամը չէ: Երբ մէկը անիլաւաքար եւ կանխամուսուլթանով ո՞րք մը զործած է, ինչո՞ւ մահուան չի դատապարտել: Երբ չորս հայեր կարաղան քարճարան սրբազան իրաւունք մը պաշտպանած ըլլալու համար, Ի՞նչ իրաւունքով այդ վճիռը պիտի զործադրել անոնց նկատմամբ, որոնք ո՞րք գործութիւնը արհեստ ըրած են: Եւ մարդկային ո՞ր օրէնքով կը պահուի այնպիսի սուլթան մը, որ իթէ հասարակ անհատ մ'ըլլար մինչեւ հիմա 100 անգամ մահուան դատապարտուած կըլլար: Միթէ զայի վրայ ըլլալը լիազօրութիւն կուտայ մարդու հրէջ մ'ըլլալու եւ անպատիժ մտալու:

Հայութեան անճնուրաց գաւազներուն կը մայ իրենց ազգին այս գերագոյն ծանաթամին թոյլ շտալ, որ մեր անիւնկալի թշնամին նոր դաւեր արէ. շարժէ, հայ երիտասարդ, ըրա արարելու այլ ազգին վրէժ-ինչորութեւնը աւելի կը ստակայ Համիտը, քան Յունական քալիքարներն: Տարիկ կատարակութեան խելքը հասած է թէ հայութեան ձեռքէն ժողովուրդներ չունի: Եթէ շատերուն համար անցած է հերոսութեան դարը, մեզի համար նոր կսկսի: Հրացանի մը ծայրը աւելի կը սարսեցնէ Համիտի գահը, քան եւրոպական տէրութիւններուն զոհնչեցողը: Եթէ չպիտի ապրինք իրեն մարդ, պէտք է մեռնիլոր իրեն մարդ:

- Միջոտ առ հայ ժողովուրդ,
- Մեզ համար չէ գարնան գալը,
- Մեզ համար չէ Բիստոսո յարեալը,
- Մեզ համար միայն սուրն ու գէնքը:

**Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Խ Ն Գ Ր Ո Յ Ա Ռ Թ Ի Ի**

Մենք մինչեւ այժմ զեւ ոչ մի խօսք չինք ասել մի հարցի մասին, որ երկար ժամանակ խօսակցութեան առարկայ է

ՀԱՍՆԵՐԱԾԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

գարծել զլիսաւորապէս արտասահմանեան հայերի մէջ. Սպասուած էինք, որ այդ հարցը պարզւի, «Իշխակցութիւնը» իր զեք ջն ա կ ա ն որոշումը կայացնի եւ ապա մենք ասէինք մեր վերջին խօսքը: Այդ հարցը միութեան կամ համերաշխ գործունէութեան մասին եղած բանակցութիւններն են, որ սկսուել էին «Վերակազմեալ» Հնչակեան կուսակցութեան եւ Հ. Յ. Իշխակցութեան մէջ:

Իւրաքանչիւր մի անհատ, որ քչկց-չատից տեղեկութիւն ունի յեղափոխական գործունէութեան մասին, գիտէ, թէ ինչ աստիճան զուշութիւն եւ շրջահայեցողութիւն է պահանջուում ամեն մի քայլափոխում: Արդ, հայ հասարակութիւնը, որ հետաքրքրուում է յեղափոխական կուսակցութիւնները միութեան կամ համերաշխ գործունէութեան խնդրով, պէտք է հասկանար ինչպիսի փոփոխութիւնը, ուստի եւ մեր «լուսթեան» բնական պատճառները, պէտք է հասկանար, որ այս տեսակ զէպքերում բաւական չէ միայն արտայայտել պատճառական յանկութիւններ, այլ անհրաժեշտ է, ուսումնասիրել այն մարմինը, որի հետ միասին ձեռք-ձեռքի տւած պէտք է տանել Հայրենիքի պապութեան ծանր ու պատասխանատու աշխատանքը եւ զանկ գործնական, նպատակայարմար ճանապարհներ միացնելու ի սկսել ա ն յեղափոխական ուժերը:

Կրկնում ենք, հասարակութիւնը պէտք է խորհուրդ տայ մեզ զգոյշ վերաբերումն դէպի ամեն մի անհատ, որ ասպարէզի վրայ է յեղափոխական անւան տակ, պէտք է աջակցի մեզ հեռացնելու այն խոչընդոտները, որոնք արգելք են հանդիսանում բուն գործիչ ուժերի համախմբման եւ ոչ թէ պահանջի մեզանից գեղեցիկ խօսքեր, հմայիչ խոստումներ, փքուն ձաւեր, որոնք սաղում են բեմախօսներին եւ ոչ կաւի դաշտում գտնուող զինուորայիններին:

Դժբաղդաբար այդպէս չէ: Մեր լուսթիւնը զանազան տեսակ մեկնութիւնների նիւթ է դարձել: Բայց այդ, հասարակութեան մի մասը, որ հետեւ է պահել իրեն յեղափոխական շարժման մէջ ջերմ մասնակցութիւն ունենալուց եւ որը այժմ եւս նեղութիւն չի կրում աւելի մօտենալու եւ գործի ընթացքի մասին քիչ թէ շատ ճիշտ գաղափար կազմելու, բնականաբար ամենաբարդ հարցերը մնում է ամենազիւրկին կերպով եւ անտեղի դիմումներով գուր արժուկ յարուցանում: Միւս մասը իր դիրահաւաստութեան շնորհիւ կոյր գործիք է դառնում բախտախնդիրների ձեռքին եւ իր բարի, անկեղծ յանկութիւնները ծառայեցնում պղտոր ջրերում ձուկ որսացողների դձուձ շահերին:

Յայտնելով հասարակութեան, որ «Իշխակցութեան» պատասխանը հնչակեան «վերակազմեալ» վարչութեան պետ եւս վերջնականապէս չի ձեւակերպւած, մենք հասարակութեան անհամբեր ձայներին բաւականութիւն տալու համար հետեւեալ անգամ կը պարզենք մեր ուշ պատասխանելու պատճառները: Բայց մեր բռնած դիւքը լաւ պարզելու համար, մեզ անհրաժեշտ կը լինի խօսել «Հնչակեան կուսակցութեան» մէջ ծագած բաժանումների փոխադարձ մերկացումների մասին: Մի բան, որից մենք խոյս ենք տւել յամառաբար երկար ամիսների ընթացքում եւ որին մենք դիմում ենք մեր կամքին հակառակ, զգալով, թէ որքան դատապարտելի է ներկայ ճգնաժամում զբաղեցնել հայ հասարակութիւնը այդպիսի անախտժ հարցերով:

Միացեալ Նահանգների Փօլ-Քիվեր քաղաքի Հընչակեան մասնաճիւղը եւ Դաշնակցական կոմիտէն կաշարել են իրենց մէջ համաձայնութիւն համերաշխ գործունէութեան համար:

Մեզ ուզարկւած է այդ երկու մարմինների խառը ժողովի արձանագրութիւնը, կնքւած եւ ստորագրւած երկու կողմից էլ:

Թողնելով համաձայնութեան այլ եւ այլ կէտերը, որոնք բոլորովին տեղական նշանակութիւն ունեն, հասարակութեան ուշադրութիւնն ենք դարձնում արձանագրութեան հետեւեալ կէտի վրայ: Խառը ժողովի սուղին խնդիրը եղել է քննել թէ բանակցողներից իւրաքանչիւրն իրաւունք ունի արդեօք անկախօրէն բանակցութիւնները տանել:

«Դաշնակցական» թէ իրենց ծրագրի եւ թէ իրենց Ամերիկայի պատգ. ժողովի արձանագրութեան վիպարութիւնը բերելով ապացուցին թէ իրաւունք ունեն:—Իսկ Հնչակեանք անկարող լինելով ցուցնելու համար նման օրինակ մի որ եւ է պաշտօնական զուլթիւնը որոշեցաւ, որ երկուստէք փոխադարձաբար ապահովագրեր փոխանակեն, որպէսզի մի որ եւ է. . . ա յ ա ա ղ ի ն մ ի ջ ջ ա մ ո ո լ թ ի լ ն կ ա ը ո ղ չ ը լ ա յ ի ա խ ո թ լ երկու կողմանէ վաւերացուած եւ կնքուած վճիռները»:

Արձանագրելով համերաշխ գործունէութեան այս փորձը, յայտնում ենք, որ Փօլ-Քիվերի մեր կոմիտէն, հետեւելով զանազան ժամանակներ զանազան տեղերում մեր միւս կոմիտէների արած քայլերին, վճարել է «Դաշնակցութեան» Ծրագրի ոգու համեմատ:

Աւելորդ չենք համարում յիշեցնել հայ հասարակութեան «Դրօշակի» առաջին տարւայ առաջին համարի (1891 թ. մայիս) մէջ լոյս տեսած յայտարարութիւնը՝ հաստատելու համար Փօլ-Քիվերի, ինչպէս եւ մեր միւս կոմիտէների արած քայլերը:

«Վերեւ մենք բերինք համառօտ ձեւով այն զանազանութիւնը: զոյլութիւն ունեցող օրգաններից, որ ստիպում է մեզ երեւան գալ միտող օրգանով, սակայն որչափ եւ զ ա ն ա զ ա ն ո լ ե ն ք ուղղութեամբ նրանցից, այնուամենայնիւ մենք ուզում ենք նրանց նետ ընկերակաւ յարաբերութեան մէջ լինել, որովհետեւ բոլորս էլ կըրուում ենք մի ընդհանուր թշնամու դէմ»:

- ՆՆՈՐԱՏՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱԿ
- Ռուսաստանի Կ. Ք. քաղ. ստացւած են.
  - Առաջին թերթից 63 ըուրլի 10 կոպէկ, № 1 ստորագրութիւնից 50 ը., Ս. 120 ը., № 2 ստորագրութիւնից 14 ը., Մեր խմբից Գ. Ե. 25 ը., Յ. Պ. 10 ը., Մարս 50 ը., Ա. Ա. 3 ը.
  - Ահազգնի միջոցաւ Ռուսաստանի Խ. քաղ. Գերձէն 5 ըուրլի:
  - Փրանս. Ն. քաղաքից ստացւած են.
  - Տիգրիս 20 Ֆր., Արգոս 10 Ֆր., Արպեր 4 Ֆր., Աարդապետ 5 Ֆր., Տիգձէք 6 Ֆր., Եփրատ 3 Ֆր., Սարկաւադ 2 Ֆր., Տրդատ 2 Ֆր.
  - Նոյն տեղից Աշոտ 2 Ֆր., Ակն 2 Ֆր.
  - Նիւ-Եօրքէն՝ Յ. Ա-էն 1 դոլ.
  - Վիշապ քաղ. կեդ. կոմիտէի սնդուկի մէջ ստացւած են.
  - Սարգսեան 20 օսմ. ոսկի, Հուր 20 օսմ. ոսկի, Գ. 100 Ֆր., Կամաւոր 300 զոան, Թոխէք 60 զո., Տար.

դանեան խմբի անդամ օր. 20 20 զու., Սեխ. Եղիա 20 զու., Նոյնը 5 զու., Արէս 20 զու., Կախադան 18 զու., Գեղասար 10 զու., Միւլթիւն 4, 15 զու., Սէր խ. 10 զու. Նոյն տեղից ստացւած են (15 յունիս-12 օգոստոս 96 թ.):

Սար 200 օսմ. ոսկի, Մարկոս 200 օսմ. ոսկի, Խաչ. Գառ. 100 օսմ. ոսկի, Յուսացողք 1000 ֆրանկ, Լամբա 20 օսմ. ոսկի, Կալօրիէլ 20 օսմ. ոսկի, Թիւ մէկ 20 օսմ. ոսկի, Ախտէր 11 օսմ. ոսկի, Զիֆթ 5 օսմ. ոսկի, Անայիս 3 օսմ. ոսկի, Վարդապետ 154 դաճեկան:

Բօլգ. Միլիտար քաղաքից ստացւած է. Սլաք 20 ֆր., Մարտիրոս 20 ֆր., Ա. Մինասեան 10 ֆր., Հարեհասէր 10 ֆր., ԼԼոն Մ. Թօփսաքալեան 10 ֆր., Ջաքար 10 լէվ, Թազուր 6 լէվ, Օ. Ս. Փափազեան 6 լէվ, Ալէքսան Օ. Մէրտուճեան 5 լէվ, Մկրտիչ Լալէեան 5 լէվ, Ռուժք 5 լէվ, Ս. Հաճի Գրիգորեան 5 լէվ, Գ. Ս. Զափուրճեան 2 լէվ: Գրիգոր Սիմոնեան 2 լէվ, Յակոբ Թարութիւնեան 2 լէվ, Ոստանիկ 40 ֆր., Արժան 2 լէվ:

Տապար քաղաքի կեդ. սնդուկի մէջ ստացւած են. Արանտեր գիւղից Տ. Նազլու 5 ըուրլի, Տ. Ջանակ 1 ը., Խ. Գ. 1 ը., Հաճի-Պապ 45 կոպէկ, Կին մը 4 կոպ.

Զէս գիւղից Տ. Պայծառ 1 ը., Յ. Պ. 5 ը., Ս. Ջ. 11 ը., Կ. Ջ. 10 ը., Ս. Ջ. 2 ը., Գ. Գ. 5 ը., Խ. Ա. 5 ը., Մ. Ա. 15 ը., Յ. Ա. 5 ը., Ծ. Ա. 10 ը., Մ. Հ. 8 ը., Տ. Աննա 1 ը., Ս. Բ. Վ. 5 ը., Կ. Բ. 1 ը., Այառաժ գիւղից Ա. Ս. 2 ը., Գ. Ա. 5 ը., Յ. Ա. 10 ը. — Լեղիջուր գիւղից Յ. Տ. 15 ը.

Վառնայի կոմիտէի արկղը մտած է թատերական ներկայացումէ մը զուտ հասոյթ 481 լէվ 20 ս.

Շոգեկառք 25 լէվ, Էվելինա 4 լէվ, Թամար 5 լէվ, Արագիւ 2 լէվ, Կիր 1 լէվ, Հայկակ Խ. 6 լէվ 25 ս., Եփրատ խ. 10 ևս 9 լէվ, Բաջուսիք խ. 5 լէվ, Ալիս խ. 5 լէվ, Աշխէն խ. 8 լէվ 60 ս., Փայլածու խ. 4 լէվ, Աստղիկ խ. 8 լէվ 50 ս., Վերջալոյս խ. 5 լէվ, Խիշան խ. 6 լէվ, Ն. Ղ. 2 լէվ, Օր. Գոհար 1 ֆրանս. ոսկի:

Չոր խ. 14 լէվ, Գեղամ խ. 8 լէվ, Կրակ խ. 4 լէվ, Օփան 10 լէվ, Մախթիկ 2 լէվ, Մարո խ. 2 լէվ — Թոբիչ խումբէն՝ Յ. Յ., Ա. Ա. 2-ական լէվ, Ա. Մ. 1 լէվ, Ա. Յ. Ա. 6 լէվ, Կ. Մ. Ս. 3 լէվ, Մ. Մ. 2 լէվ, Առիւծ Ծ. 3 լէվ, 1897-էն 10 լէվ 30 սանտ.

Շումլայի մասնաճիւղի միջոցաւ Հրացան խ. 23 լէվ 80 ս., Վարած խ. 9 լէվ, Ռուժք խ. 3 լէվ, Ուժանակ խ. 3 լէվ, Կայծ խ. 10 լէվ 85 ս., Ա. Բ. 2. Գեղցիէն 7 լէվ 75 ս., Բ. 1 լէվ, Մասնաճիւղին անդամներէն 44 լէվ, Մասնաճիւղին Գանձանակէն 65 լէվ 55 ս. Շումլայի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութենէն 25 լէվ:

Ի նպատակ Հարաւային-Ամերիկայ ղուկւած դաշնակցականներու Ամերիկ. Լինի Դաշնակցական կոմիտէի ձեռամբ հանգանակած է.

Ա. Մ. 9 ղլ., Ղ. Բ. 6 ղլ., Պ. Ս., Պ. Շ. 5-ական ղլ., Կ. Կ. 4 ղլ., Պ. Ա., Տ. Ս., Ս. Փ., Ս. Խ. 3-ական ղլ., Մ. Ն., Յ. Բ., Յ. Հ., Լ. Բ., Գ. Ղ., Կ. Ս., Մ. Է., Ա. Ժ., Ա. Մ., Գ. Ղ., Յ. Պ., Յ. Պ., Հ. Մ. 2-ական ղլ., Բ. Ս., Մ. Մ., Տ. Ա., Ջ. Պ., Գ. Գ., Մ. Մ., Ա. Բ., Պ. Պ., Յ. Մ., Ա. Լ., Ա. Ա., Ն. Տ., Գ. Ա., Յ. Կ., Մ. Ս., Ա. Ա., Կ. Է., Վ. Կ., Գ. Պ., Բ. Կ., Ս. Ս., Ս. Ա., Ա. Մ., Խ.

Ա., Գ. Ա., Պ. Պ., Ղ. Ս., Տ. Պ., Տ. Է., 1-ական ղլ., Գ. Է., Ա. Գ., Յ. Ա., Կ. Կ., Գ. Մ., Գ. Օ., Գ. Պ., Յ. Կ., Յ. Է. 50-ական սանտ., Յ. Բ., Տ. Յ., Ոճի, Շ. Ղիք 25-ական սանտ.

Ռուսնուկի կոմիտէի սնդ. մէջ ստացւած են.

Գաղտնագահ խ. 22 ֆր., Պանդուխտ խ. 28 ֆր., Նոր Աշխարհ խ. 25 ֆր., Արարատ խ. 15 ֆր., Մուրճ խ. 6 ֆր., Թիւ 4152-60-ից 13 ֆր., Արուսեակ Տ. Ից 2 ֆր., Պ. Ե. Ից 2 ֆր.

Պուրկազի կոմիտէի սնդ. մէջ ստացւած են.

Կամաւորական խ. 16 լէվ, Կանոնց խ. 58 լէվ 80 սանտ., Տարսոյ խ. 61 լէվ 20 սանտ., Միւս աղբայիններէն 681 լէվ:

\* \*

Ֆիլիպոսպօլի հայ կանանց ձեռքով կազմւած Դաշնակցութեան Օժանդակ «Շաքէ» կոմիտէի յունւար ամսուայ մուտքը եղել 117 ֆր. 80 ս.

Վասպուրականի կանանց և օրիորդներու խմբերու ներատուութիւնները.

Ժենիայի խ. 75 դհ., Կրանպիլի խ. 23 դհ., Գօզէի խ. 71 1/2 դհ., Դոհարիկի խ. 31 1/4 դհ., Մայրպիլի խ. 53 1/2 դհ., Հայկունի խ. 68 1/2 դհ., Կարպիւղակի խ. 20 դհ., Նազուչի խ. 19 դհ., Եւգենիէի խ. 36 դհ., Անկախ խ. 38 դհ., Թենիի խ. 26 դհ., Սեթայի խ. 19 դհ., Սոնայի խ. 32 դհ., Բաջուհիի խ. 43 դհ., Վարսենիկի խ. 21 դհ., Զինարի խ. 14 դհ.

Ողջունում ենք հայ կանանց և օրիորդներին ջերմ մասնակցութիւնը յեղափոխական գործին:

Ա Ջ Գ

Պոլիս Խասկեղ քնակող երկու պարսկահազատակ եղբայրներ Նորաշուք և Վրաստանցի Թորալուստի, որոնք Օգոստոս 14-ին Խասկեղի եկեղեցին խրկած «Դաշնակցութեամբ» ասորմանակներն երկու հատ Սմիթ-Վիստըն իրացուցած էին, մործեցին վերադարձնել ատոնք մասնայի կոմիտէին, լրջաբար առարկելով թէ ազգին ասորմանքն են ատոնք և ոչ ոք իրաւունք ունի ետ պահանջելու իրենցս:

Նոյն Նուրաշու Թուրքմենը այդ տազնապի միջոցին փախստականի մը համար «Դաշնակցութեամբ» կողմէն իրեն յանձնուած երկու օսմ. ոսկին եւս կոկորոն անցուցած է, մէկ մէծիւմ միայն տարավ պատկանեալ տեղը: Այդ դրամու աւ կը մեծուի այժմ հատուցանելու, այն առարկութեամբ թէ վերջին դէպքին հետեւանքով մեծամեծ վնասներ կրած են, թէև շուայտութեամբ համար դրամ չի պակսեց իրենց:

Այս ամենալիքը արարքը հրաւարակելով կը հրաւիրենք հասարակութիւնը իր զգամքով և արհամարհանքով հալածելու այդ երկուքը եւ ատոնց նմանները, որոնք չեն ինքնաբ ակախանելու ժողովուրդին յանդու յեղափոխութեամբ եր արհն-քրտիքով ներած արմանը:

\* \*

Այս առթիւ հրատէի կը կարոնք ամեն ամսոց, որ «Դաշնակցութեամբ» պատկանած ուսմը, դաշնայն, ատորմանակ, գնաւորներ կամ ուր եւ է իր վերջին դէպքին առթիւ ի ի ի յ ց, ք ո լ մ. Ն ա ց ա ծ ու Ն ի ի ն կամ՝ տ է ղ մ ղ. պ ա հ ա ծ են փութան մանրամասնութի հարորդիկ յարագրութեամբ, որպէսզի պատշաճ դաւանաւ կղանակով առնուին եւ յանձնուին «Դաշնակցութեամբ» տեղական կոմիտէներուն: